

«ՍԵՎ» ԾՈՎ ԿԱԼԻՓՈՌՆԻԱՅԻ ԸՓԵՐԻ ՄՈՏ

Սմոգ—այսպես են ամերիկացիներն անվանում ծխի և մառախուղի այն խառնուրդը, որ կախված է մեծ ֆա-
ղաֆների վրա: Սմոգից հատկապես
տուժում է Լոս-Անջելոսը: Այն բնկած
է երկու լեռնաշղթաների միջև եղած
հովտում: Ամառ, քե ձմեռ օվկիանոսից
եկող օդի սառը զանգվածները վերևից
շրջափակում են տաֆ (և ծխոտ) օդը
հովտում, քույլ չտալով նրան ներծծվել
մթնոլորտում: Դրա հետևանքով գոր-
ծարանների ծուխն ու ավտոմեքենանե-
րի արտանետած գազերը կուտակվում
են ֆաղաֆի վրա և մառախուղի ժամա-
նակ խառնվելով իրար առաջացնում են
խեղդող դեղնա-կարմագույն ծխածած-
կույթ, որն օրերով մնում է ֆաղաֆի
վրա կախված: Իսկ հետևանքը լինում
է այն, որ խանգարվում է տրանսպոր-
տի աշխատանքը, նախապահներին
աղետներ են տեղի ունենում, մարդ-
կանց մոտ սկսվում է շնչառական ու-
ղիների հիվանդության համաճարակ:

Ինչպիսի նախագծեր ասես չեն ա-
ռաջարկվել սմոգի դեմ պայքարելու
համար: Օրինակ, Լոս-Անջելոսում և

նրա շրջակայքում տեղակայել հզոր
օդափոխիչներ, որոնք դեպի վեր կհշեն
սմոգը: Կամ լեռնաշղթաներում փորել
բունելներ և նրանց միջոցով կատարել
հովտի օդափոխությունը: Այս բոլորն,
ավա՛ղ, դեմ են առնում հսկայական
դրամական ծախսերի:

Իսկ վերջերս ամերիկյան գիտնական
Օլիվեր Սելֆրիջը առաջարկել է Կալի-
ֆոռնիայի ափերի մոտ «սևացնել» Խա-
ղաղ օվկիանոսը: Դրա համար առափ-
նյա ջրերը պետք է ծածկել սև սինթե-
տիկ քաղանթով: Այդպիսի «սև գոտու»
լայնությունն ըստ Սելֆրիջի հաշվարկ-
ների պետք է կազմի մոտ 150 կմ:
Կլանելով արևի ճառագայթները, քա-
ղանթը կտաֆացնի օդային զանգված-
ները, որոնք շարժվելով դեպի մայրցա-
մաֆը հովտից կհշեն սմոգը: Մոտ մեկ
միլիմետր հաստություն ունեցող քա-
ղանթը կախված պետք է լինի խա-
րխիսներին կապված օդապարիկներից:
Նախագիծն ինֆնատիպ է, խոսք չկա:
Բայց, հազիվ քե սա էլ իրագործվի:
Այն հեռու է հասարակ և էժան լինե-
լուց:

ԱՆՍՈՎՈՐ ՄԻՆԵՐԱԿ

Շվեդական երկրաբանները Խոֆորս կոչված
տեղանքում հայտնաբերել են մի անսովոր մինե-
րալ, որն անվանել են «Խոֆորսիտեն»: Այդ մի-
ներալը պարունակում է 30—35 տոկոս մագնե-
զիումի օքսիդ, մոտավորապես 2 տոկոս ալյումինի
օքսիդ, իսկ կալիում՝ ամեննին: Պարզվեց, որ այն
շատ էֆեկտավոր նյութ է ռենտգեն-կաթինետե-
րի պաշտպանիչ դոզների պատրաստման համար:
Նախկինում այդ դոզները պատրաստում էին մին-
չև 150 մմ հաստության պողպատից, որը շատ
թանկ էր նստում:

Հայտնաբերված միներալը մեխանիկական
մշակման չի ենթարկվում, դրա համար սկզբում
այն մանրում են, ապա կապակցող նյութի միջո-
ցով կաղապարում:

